ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ «ՀՈՐԻԶՈՆ ԵՎՐՈՊԱ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 18 հունվարի 2022 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վ. Դումանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 2025-Ա որոշմամբ 2021 թվականի նոյեմբերի 12-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի դեկտեմբերի 10-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի նոյեմբերի 12-ին Բրյուսելում՝ ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության նպատակով:

2. 2021 թվականի նոյեմբերի 22-ին Եվրոպական միության կողմից ստացվել է ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

3. Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող երեք Հավելված՝ **Հավելված I**. «Հորիզոն Եվրոպա» Ծրագրում (2021-2027 թթ.) Հայաստանի ֆինանսական ներդրումները կարգավորող կանոնները», **Հավելված II.** «Հայաստանում գործող

համարժեք ծրագրերի ցանկ» և **Հավելված III.** «Հուսալի ֆինանսական կառավարում»՝ Ֆինանսական շահերի պաշտպանություն և վերականգնում:

I հավելվածն ունի 3 մաս՝ **I. Հայաստանի ֆինանսական ներդրման հաշվարկը, II. Հայաստանի գործառնական ներդրման ինքնաբերաբար ուղղումը, III. Հայաստանի ֆինանսական ներդրման վճարումը, Հայաստանի գործառնական ներդրման մեջ կատարված ճշգրտումների վճարումը և Հայաստանի գործառնական ներդրման համար կիրառվող ինքնաբերաբար ուղղված գումարի վճարումը:**

4. Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար դիմումին կից ներկայացված՝ Արտաքին գործերի նախարարության եզրակացության համաձայն՝ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիրը, որը նախատեսված է 2021-2027 թթ. համար, հանդիսանում է 2014-2020 թթ. իրականացվող «Հորիզոն-2020» շրջանակային ծրագրի շարունակությունը: Վերջինիս Հայաստանի Հանրապետության մասնակցությունն սկսվել է 2016 թվականից՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Հորիզոն-2020» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» Միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի ստորագրմամբ (ստորագրվել է 2016 թվականի մայիսի 19-ին, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2016 թվականի հոկտեմբերի 19-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-240-Ն որոշմամբ (ՍԴՈ-1297), ուժի մեջ է մտել՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ին):

Ըստ եզրակացության՝ «Հորիզոն 2020» ծրագիրը մեծ ներդրում է ունեցել Հայաստանի գիտական ոլորտի զարգացման մեջ և նշյալ ոլորտի ներկայացուցիչներին տարբեր դրամաշնորհային նախաձեռնություններին մասնակցելու բազում հնարավորություններ է ընձեռել: «Հորիզոն 2020» ծրագրի ասոցացված երկրների շարքում Հայաստանի Հանրապետության մասնակցության հաջողության գործակիցը կազմել է 11,81 տոկոս (ծրագրի շրջանակներում հայաստանյան գիտական խմբերի

մասնակցությամբ ներկայացվել է 312 հայտ, որոնցից վավեր են ճանաչվել 271-ը, իսկ ֆինանսավորման երաշխավորվել է 35 հայտ):

Համաձայնագրով Հայաստանի գիտական շրջանակների ներկայացուցիչներն իրավունք են ստանում օգտվելու 95,5 մլրդ եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ Եվրոպական միության ամենամեծ գիտական համագործակցության ծրագրի ընձեռած լայն հնարավորություններից:

Համաձայն եզրակացության՝ ակնկալվում է, որ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին մասնակցությունը հավելյալ խթան կհանդիսանա Հայաստանի ազգային գիտահետազոտական համակարգի զարգացման համար, կնպաստի եվրոպական գիտական տարածքում հայ գիտնականների հետագա ինտեգրմանը, կընդլայնի Եվրոպական միության երկրների գիտական ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորությունները:

5. Համաձայնագրի 2-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված է, որ Հայաստանի ներկայացուցիչներին թույլատրվում է որպես դիտորդներ մասնակցել 2021/764/ԵՄ որոշման 14-րդ հոդվածում նշված կոմիտեում՝ առանց քվեարկելու իրավունքի և այն դեպքերում, երբ քննարկվող հարցերը վերաբերում են Հայաստանին: Քվեարկության ժամանակ կոմիտեները նիստերը կանցկացնեն առանց Հայաստանի ներկայացուցչի ներկայության: Հայաստանը կտեղեկացվի արդյունքների մասին:

Համաձայնագրի 2-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված է, որ 2021/764/ԵՄ որոշման 14-րդ հոդվածում նշված կոմիտեի աշխատանքներին կամ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի իրականացմանն առնչվող այլ հանդիպումներին որպես դիտորդներ մասնակցող Հայաստանի ներկայացուցիչների և փորձագետների ճանապարհածախսն ու կեցության ծախսերը կփոխհատուցվեն Եվրոպական միության կողմից՝ համաձայն Եվրոպական միության անդամ պետությունների ներկայացուցիչների համար գործող ընթացակարգերի:

6. «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի կամ հայաստանյան իրավաբանական կազմավորումների մասնակցությունը կախված է Եվրոպական միության ընդհանուր բյուջեի (այսուհետ՝ Միության բյուջե) շրջանակներում Ծրագրին և դրա կառավարման, իրականացման և գործառնական ծախսերի ուղղությամբ Հայաստանի կատարած ֆինանսական ներդրումից (Հոդված 3, կետ 1):

7. Հայաստանի կողմից Միությունում հիմնադրված իրավաբանական կազմավորումների ֆինանսավորումը կիրականացվի Հայաստանի՝ հետազոտությունների և նորարարության ծրագրերի իրականացումն ապահովող օրենսդրության համաձայն: Այն դեպքերում, երբ ֆինանսավորում նախատեսված չէ, Միությունում հիմնադրված իրավաբանական կազմավորումները կմասնակցեն իրենց միջոցներով (Հոդված 5, կետ 3):

8. Չշոշափելով Ծրագրի մշտադիտարկման և գնահատման առնչությամբ Հանձնաժողովի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի և Աուդիտորների եվրոպական դատարանի պատասխանատվության շրջանակը՝ Հայաստանի մասնակցությունը Ծրագրին մշտապես կենթարկվի մշտադիտարկման՝ գործընկերության հիմքով՝ ընդգրկելով Հայաստանին և Հանձնաժողովին (Հոդված 7, կետ 1):

9. Համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ՝ հիմնադրվում է «Հետազոտությունների և նորարարության հարցերով Հայաստան-ԵՄ համատեղ կոմիտեն, որի գործառույթները սահմանված են Համաձայնագրի 8-րդ հոդվածում:

10. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- որպես ասոցացված պետություն, մասնակցել «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին («Հորիզոն Եվրոպա» ծրագիր) և աջակցել դրա բոլոր բաղադրիչներին, որին հղում է տրվում 2021/695/ԵՄ կանոնակարգի Հոդված 4-ում, և որը ներդրվել է 2021/764/ԵՄ որոշմամբ ստեղծված հատուկ ծրագրով՝ վերջիններիս ամենավերջին լրամշակված տեքստերի համաձայն և Նորարարությունների և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտին ֆինանսական հատկացումներ ուղղելու միջոցով (Հոդված 1, կետ 1).

- մասնակցել «Հորիզոն Եվրոպա» ծրագրին՝ «Մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից՝ Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության ծրագրերին Հայաստանի մասնակցության ընդհանուր սկզբունքների մասին շրջանակային համաձայնագրի մասին» Արձանագրությամբ սահմանված կարգի, ինչպես նաև Համաձայնագրով սահմանվող կարգի և պայմանների, Համաձայնագրի Հոդված 1-ում թվարկված իրավական ակտերի, ինչպես նաև «Հորիզոն Եվրոպա» ծրագրի իրականացմանն առնչվող ցանկացած այլ կանոնների համաձայն՝ հիմք ընդունելով դրանց ամենավերջին լրամշակված տեքստերը (Հոդված 2, կետ 1).

- նախքան 2021/695/ԵՄ կանոնակարգի 22-րդ հոդվածի 5-րդ կետի շրջանակներում Եվրոպական միության ռազմավարական ակտիվներին, շահերին, ինքնավարությանը կամ անվտանգությանն առնչող գործողություններին Հայաստանում հիմնադրված իրավաբանական կազմավորումների մասնակցության հնարավորության հարցի վերաբերյալ որոշում կայացնելը, Հանձնաժողովի պահանջի դեպքում տրամադրել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված հատուկ տեղեկատվությունը կամ հավաստիացումները, մասնավորապես՝ տեղեկատվություն առ այն, թե արդյոք Եվրոպական միությունում հիմնադրված իրավաբանական կազմավորումները փոխադարձ հասանելիություն ունեն կամ կունենան Հայաստանում գործող «Հորիզոն Եվրոպա» գործողությանը համարժեք և նախատեսվող ծրագրերին,

տեղեկատվություն առ այն, թե արդյոք Հայաստանն ունի ներդրումների ուսումնասիրման ազգային մեխանիզմ և հավաստիացում առ այն, որ Հայաստանի իշխանությունները կզեկուցեն և կխորհրդակցեն Հանձնաժողովի հետ այն բոլոր հնարավոր դեպքերի մասին, երբ այդպիսի մեխանիզմի կիրառմամբ տեղեկացել են նախատեսվող օտարերկրյա ներդրումների կամ դրանց տնօրինման մասին այնպիսի կազմավորման կողմից, որը հիմնադրվել կամ կառավարվում է Հայաստանից դուրս գտնվող հայաստանյան իրավաբանական կազմավորման կողմից, որն ստացել է «Հորիզոն Եվրոպայի» ֆինանսավորում Եվրոպական միության ռազմավարական ակտիվների, շահերի, ինքնավարության կամ անվտանգության հետ կապված գործողությունների համար, այն պայմանով, որ Հանձնաժողովը Հայաստանին կտրամադրի Հայաստանում հիմնադրված համապատասխան իրավաբանական անձանց ցանկը՝ այդ կազմավորումների հետ դրամաշնորհային պայմանագրերի ստորագրումից հետո և հավաստիացումներ առ այն, որ Հայաստանում հիմնադրված կազմավորումների կողմից վերոնշյալ գործողությունների արդյունքում մշակված որևէ արդյունք, տեխնոլոգիա, ծառայություն և ապրանք չի ենթարկվի սահմանափակումների ԵՄ անդամ պետություններ արտահանման համար՝ գործողության ընթացքում և գործողության ավարտից չորս տարի հետո՝ տարեկան կտրվածքով, գործողության ընթացքում և գործողության ավարտից հետո չորս տարի շարունակ տրամադրելով արտահանման համար ազգային սահմանափակումների ենթակա օբյեկտների լրամշակված ցանկը (Հոդված 2, կետ 3).

- գործող կանոնակարգերի շրջանակներում ներդնել բոլոր ջանքերը Համաձայնագրով նախատեսված գործողություններին մասնակցող գիտնականների ազատ տեղաշարժը և կեցությունն ապահովելու, ինչպես նաև այդ գործողությունների համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների միջսահմանային տեղաշարժը հեշտացնելու համար (Հոդված 2, կետ 11).

- անհրաժեշտության դեպքում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի Հայաստանում գնված կամ Հայաստան ներմուծված ապրանքներն ու

ծառայությունները, որոնք մասամբ կամ ամբողջությամբ ֆինանսավորվում են Համաձայնագրի դրամաշնորհային համաձայնագրերի և (կամ) գործունեության իրականացման համար կնքված պայմանագրերով, ազատվեն Հայաստանում գործող մաքսատուրքերից, ներմուծման տուրքերից և այլ հարկային վճարներից, ներառյալ՝ ԱԱՀ-ից (Հոդված 2, կետ 12).

- «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի կամ հայաստանյան իրավաբանական կազմավորումների մասնակցության համար, որը կախված է Միության բյուջեի շրջանակներում Ծրագրին և դրա կառավարմանը, իրականացմանը և գործառնական ծախսերի ուղղությամբ Հայաստանի կատարած ֆինանսական ներդրումից, տարեկան երկու վճարումների միջոցով՝ ոչ ուշ, քան մայիս և հուլիս ամիսներին՝ եվրոյով կատարել ֆինանսական ներդրում, որը հետևյալ երկու վճարումների գումարն է՝ գործառնական ներդրում (հաշվարկվում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգին համապատասխան) և մասնակցության վճար (կազմում է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն հաշվարկված տարեկան սկզբնական գործառնական ներդրման 4%-ը), որը մարել փուլային կերպով, ինչպես սահմանված է Հավելված I-ում (2021՝ 0,5%, 2022՝ 1%, 2023՝ 1,5%, 2024՝ 2%, 2025՝ 2,5%, 2026՝ 3%, 2027՝ 4%). մասնակցության վճարը ենթակա չէ հետադարձ ճշգրտումների կամ ուղղումների, իսկ մասնակցության համար վճարվելիք գործառնական ներդրման չափը հաշվարկվում է համապատասխան ֆինանսական տարիների համար՝ կիրառելով ճշգրտում ներդրման բանալու նկատմամբ այնպես, ինչպես սահմանված է Համաձայնագրի I հավելվածի 1-ին մասի 3-րդ կետում (Հոդված 3, կետեր 1, 2, 3, 5, 7 և 10, Հավելված I, մաս 1, կետեր 2 և 3).

- խթանել և խրախուսել բաց գիտության սկզբունքները՝ Հայաստանի Հանրապետության ծրագրերում՝ համաձայն «Հորիզոն Եվրոպա» ծրագրի կանոնների և Հայաստանի Հանրապետության օրենսդրության (Հոդված 6).

- եթե Համաձայնագիրը դադարեցվում է Համաձայնագրի 9-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն, ապա համաձայնել, որ նախագծերը և (կամ) գործողություն-

ները (կամ դրանց մասերը), որոնց մասով ստանձնվել են իրավական պարտավորություններ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, և մինչև Համաձայնագրի գործողության դադարեցումը կամ գործողության ավարտը, կշարունակվեն մինչ դրանց ավարտը՝ Համաձայնագրով սահմանված պայմաններով, ինչպես նաև համաձայնել, որ N տարվա տարեկան ֆինանսական ներդրումը, որի ընթացքում Համաձայնագիրը դադարում է գործել, կվճարվի ամբողջությամբ՝ համաձայն Համաձայնագրի Հոդված 3-ի. N տարվա գործառնական ներդրումը կճշգրտվի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն և կուղղվի Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան, իսկ N տարվա համար վճարված մասնակցության վճարը ճշգրտման կամ ուղղման ենթակա չէ, ինչպես նաև համաձայնել, որ Համաձայնագրի գործողության դադարեցման տարվանից հետո սկզբնական գործառնական վճարները, որոնք վճարվել են Համաձայնագրի ուժի մեջ լինելու տարիների համար, կճշգրտվեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն և ինքնաբերաբար (ինքնաբերաբար ուղղման հաշվարկի համար կիրառվելիք պայմանները սահմանված են Համաձայնագրի I հավելվածի II մասում) կուղղվեն՝ համաձայն Համաձայնագրի 4-րդ հոդվածի (Հոդված 9, կետ 5).

- Հանձնաժողովի կողմից ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ապրիլ և հունիս ամիսները, Համաձայնագրով ստանձնած ներդրման չափի Հայաստանի պարտավորությունների կատարման պարտավորագրի հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան հրապարակման օրվանից 30-րդ օրը, վճարել սահմանված վճարը, որը կազմում է Հայաստանի ներդրման վեց տասներկուերորդական մասը. վճարի կատարման ցանկացած ուշացում կհանգեցնի չվճարված գումարի նկատմամբ տույժերի կիրառման, որը կգործի վճարում կատարելու սահմանված վերջնաժամկետի օրվանից, և որը հաշվարկվում է Եվրոպական կենտրոնական բանկի կողմից Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի «C» հատորում հրապարակված վերաֆինանսավորման հիմնական գործառույթների համար Եվրոպական կենտրոնական բանկի կողմից կիրառվող տոկոսադրույքի համապատասխան, որն ուժի

մեջ է վճարում կատարելու ամսվա առաջին օրացուցային օրվանից՝ ավելացված 1.5 տոկոսային կետով (Հավելված I, մաս III, կետ 2, պարբերություններ 1, 2 և կետ 4, պարբերություններ 2, 3).

- Եվրոպական միությանը՝ Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կամ մարմինների գործող ակտերով և համապատասխան համաձայնագրերով և (կամ) պայմանագրերով տալ իրավունք՝ իրականացնելու տեխնիկական, գիտական, ֆինանսական կամ այլ տեսակի ստուգումներ և աուդիտ՝ ԵՄ ֆինանսական միջոցների հաշվին ֆինանսավորվող՝ Հայաստանում բնակվող ցանկացած ֆիզիկական անձի կամ Հայաստանում հիմնադրված ցանկացած իրավաբանական կազմավորման նկատմամբ, ինչպես նաև ցանկացած այլ երրորդ կողմի նկատմամբ, որը բնակվում կամ հիմնադրված է Հայաստանում և ներգրավված է Միության ֆինանսական միջոցների իրացման գործում. նման ստուգումն ու աուդիտը կարող են իրականացվել Եվրոպական միության ինստիտուտների և մարմինների գործակալների, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովի և Աուդիտորների եվրոպական դատարանի կամ Եվրոպական հանձնաժողովի կողմից լիազորված այլ անձանց կողմից (Հավելված III, Հոդված 1, կետ 1).

- ապահովել, որ Եվրոպական միության ինստիտուտների և մարմինների գործակալները, մասնավորապես՝ Եվրոպական հանձնաժողովը և Աուդիտորների եվրոպական դատարանը և Հանձնաժողովի կողմից լիազորված այլ անձինք ունենան պատշաճ հասանելիություն տեղանքին, աշխատանքներին և փաստաթղթերին (և՛ էլեկտրոնային, և՛ թղթային), ինչպես նաև աուդիտ իրականացնելու համար ողջ տեղեկատվությանը, ներառյալ աուդիտի ենթակա ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ երրորդ կողմի մոտ պահվող փաստաթղթերի ֆիզիկական կամ էլեկտրոնային կրկնօրինակներին, դրանց որևէ մասին և ցանկացած տեղեկատվական կրիչի բովանդակությանը հասանելիության իրավունքը (Հավելված III, Հոդված 1, կետ 2).

- չարգելել և չխոչընդոտել գործակալների և Համաձայնագրի III հավելվածի 1-ին հոդվածի 2-րդ կետում նշված այլ անձանց՝ Համաձայնագրի III Հավելվածի 1-ին

Հոդվածով սահմանված պարտականությունների կատարման հիմքով Հայաստան մուտքը և անհրաժեշտ միջոցներին հասանելիության իրավունքները (Հավելված III, Հոդված 1, կետ 3).

- ընդունել Եվրոպական հանձնաժողովի և Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (OLAF) Հայաստանի տարածքում վարչական հետաքննություններ իրականացնելու լիազորությունը՝ ներառյալ ստուգումներ և տեղազննումներ. այդ հետաքննությունները կիրականացվեն Միության մեկ կամ մի քանի հաստատությունների կիրառելի ակտերով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան (Հավելված III, Հոդված 2, կետ 1).

- ապահովել, որ Հայաստանի իրավասու մարմինները ողջամիտ ժամկետում Եվրոպական հանձնաժողովին կամ OLAF-ին տեղեկացնեն Միության ֆինանսական շահերի վրա ազդող անկանոնությունների, խարդախության կամ այլ անօրինական գործունեության առնչությամբ իրենց հայտնի դարձած ցանկացած փաստի կամ կասկածի մասին (Հավելված III, Հոդված 2, կետ 2).

- ապահովել, որ Համաձայնագրի III հավելվածի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն նշանակված Հայաստանի իրավասու մարմինը նախապես, ողջամիտ ժամկետներում տեղեկացվի ստուգումների առարկայի, նպատակի և իրավական հիմքերի մասին, որպեսզի կարողանա ապահովել աջակցություն (Հավելված III, Հոդված 2, կետ 4).

- ապահովել, որ Հանձնաժողովի գործակալներին և OLAF-ի աշխատակիցներին հասանելի լինեն համապատասխան տեղեկատվությունն ու փաստաթղթերը, ներառյալ՝ համակարգչային տվյալները՝ համապատասխան գործարքների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են ստուգումների և տեղազննումների պատշաճ անցկացման համար, վերջիններս կարող են նաև պատճենել անհրաժեշտ փաստաթղթերը (Հավելված III, Հոդված 2, կետ 6).

- այն դեպքում, երբ անձը, իրավաբանական կազմավորումը կամ այլ երրորդ կողմը կխոչընդոտեն ստուգումների կամ տեղազննումների իրականացումը՝ գործելով

ՀՀ օրենքների և կանոնակարգերի համաձայն, հնարավորության սահմաններում աջակցել Եվրոպական հանձնաժողովի կամ OLAF-ի ներկայացուցիչներին իրենց լիազորությունների շրջանակներում ստուգում կամ տեղազննում իրականացնելու համար: Աջակցությունը պետք է ներառի ազգային օրենսդրությամբ նախատեսված համապատասխան նախազգուշական միջոցների ձեռնարկումը, մասնավորապես՝ ապացույցները պաշտպանելու նպատակով (Հավելված III, Հոդված 2, կետ 7).

- ապահովել, որ Համաձայնագրի III Հավելվածի 2-րդ հոդվածի պատշաճ իրականացման նպատակով հայաստանյան իրավասու մարմինները Եվրոպական հանձնաժողովի կամ OLAF-ի հետ պարբերաբար փոխանակեն տեղեկատվություն և Համաձայնագրի կողմերից մեկի խնդրանքով խորհրդակցեն միմյանց հետ (Հավելված III, Հոդված 2, կետ 10).

- OLAF-ի հետ արդյունավետ համագործակցության և տեղեկատվության փոխանակման նպատակով նշանակել կոնտակտային անձ (Հավելված III, Հոդված 2, կետ 11).

- համագործակցել Եվրոպական դատախազության գրասենյակի հետ՝ ՀՀ լիազորությունների շրջանակներում հետաքննություն կատարելու, Եվրոպական միության ֆինանսական շահերին առնչվող հանցագործություններ կատարողներին և հանցակիցներին՝ գործող օրենսդրությանը համապատասխան, հետապնդելու և դատական գործ հարուցելու համար (Հավելված III, Հոդված 2, կետ 13).

- ապահովել, որ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի կայացրած որոշումները, որոնք դրամական պարտավորություններ են սահմանում անձանց համար, այլ ոչ թե պետությունների, ՀՀ տարածքում ենթակա լինեն հարկադիր կատարման, որը կիրականացվի ՀՀ օրենսդրությանը և ընթացակարգի կանոններին համապատասխան, և այդ նպատակով նշանակված մարմնի մասին ծանուցել Եվրոպական հանձնաժողովին և Եվրոպական միության արդարադատության պալատին (Հավելված III, Հոդված 3, կետ 1).

- Եվրոպական միության արդարադատության պալատի վճիռներն ու կարգադրությունները, որոնք կայացվել են Միության ծրագրերի, գործունեության, գործողություն-

ների կամ նախագծերի պայմանագրում կամ համաձայնագրում պարունակվող արբի-տրաժային կետի կիրառման նպատակով, Հայաստանում կիրառել նույն կերպ, ինչպես Եվրոպական հանձնաժողովի 1-ին կետով նշված որոշումները (Հավելված III, Հոդված 3, կետ 2).

- երաշխավորել Եվրոպական միության կառույցների ու մարմինների, որոնք ներգրավված են «Հորիզոն Եվրոպա» ծրագրի իրականացման կամ վերահսկողության մեջ, ուղիղ, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության համակարգերով, շփվելու իրավունքը Հայաստանում բնակվող ֆիզիկական անձի կամ Հայաստանում ստեղծված իրավաբանական կազմավորման հետ, որը ֆինանսավորվում է Միության ֆինանսական աղբյուրներից, ինչպես նաև ցանկացած երրորդ կողմի հետ, որը բնակվում կամ հիմնադրված է Հայաստանում և ներգրավված է Միության ֆինանսական միջոցների իրացման մեջ (Հավելված III, Հոդված 4):

11. Համաձայնագրի III Հավելվածի 2-րդ հոդվածով սահմանված ստուգումները և տեղազննումները կարող են իրականացվել Միության կողմից ֆինանսավորում ստացած՝ Հայաստանում բնակվող ֆիզիկական անձի կամ Հայաստանում հիմնադրված իրավաբանական կազմավորման, ինչպես նաև Միության ֆինանսական միջոցների իրացման գործում ներգրավված Հայաստանում բնակվող կամ ստեղծված ցանկացած երրորդ կողմի տարածքում: Ստուգումներն ու տեղազննումները կկազմակերպվեն և կանցկացվեն Եվրոպական հանձնաժողովի կամ OLAF-ի կողմից՝ ՀՀ կառավարության կողմից նշանակված հայաստանյան իրավասու մարմինների հետ սերտ համագործակցությամբ (Հավելված III, Հոդված 2, կետեր 3, 4):

12. Համաձայնագրով սահմանված ստուգումներն ու աուդիտը կարող են անց-կացվել նաև Համաձայնագրի գործողության կասեցումից հետո՝ համաձայն Համաձայ-նագրի 9-րդ հոդվածի 5-րդ կետի կամ գործողության դադարեցումից հետո՝

Եվրոպական միության մեկ կամ մի քանի ինստիտուտների կամ մարմինների գործող ակտերով սահմանված պայմաններով, և ինչպես նախատեսված են համապատասխան համաձայնագրերով և (կամ) պայմանագրերով՝ մինչև Համաձայնագրի 9-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն Համաձայնագրի կիրառման կասեցումը կամ գործողության դադարեցումն ուժի մեջ մտնելը Եվրոպական միության բյուջեով կատարված ցանկացած իրավական պարտավորության առնչությամբ (Հավելված III, Հոդված 1, կետ 4):

13. Եվրոպական հանձնաժողովի կամ OLAF-ի և հայաստանյան իրավասու մարմինների միջև տեղեկատվությունը կփոխանակվի՝ հաշվի առնելով գաղտնիության պահանջները: Փոխանակվող տեղեկատվության մեջ ներառված անձնական տվյալները պետք է պաշտպանված լինեն գործող կանոններին համապատասխան:

14. Համաձայն Համաձայնագրի 9-րդ հոդվածի՝ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Կողմերը միմյանց ծանուցում են անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտի մասին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

18 հունվարի 2022 թվականի
ՍԴՈ - 1626